Տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման պրակտիկան.

2011թ. երկրորդ եռամսյակ



2011թ.-ի 2-րդ եռամսյակի ընթացքում /ապրիլ-հունիս/ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը եւ մի շարք քաղաքացիներ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկել են տեղեկատվություն ստանալու **120 հարցում՝ էլեկտրոնային եւ գրավոր:**

120 հարցումներից 87–ի դեպքում (72%) ստացվել է լիարժեք պատասխան / նախորդ եռամսյակում լիարժեք պատասխանների ցուցանիշը 88% էր/:

Մերժում ստացվել է 2 դեպքում (2%)՝ նախորդ եռամսյակի 2 մերժման փոխարեն: Մերժումներից 1-ը հիմավոր է, քանի որ ՀՀ պաշտպանության նախարարությունը մերժումը ուղարկել է գրավոր եւ հիմնավոր, սակայն մերժումը ՏԱ օրենքով նախատեսված 5 օրվա փոխարեն ստացվել է 23 օր անց: Իսկ 1-ը անհիմն է, քանի որ բանավոր են մերժել տեղեկատվության տրամադրումը: Ապօրինի մերժման հեղինակն է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

Նախորդ եռամսյակի համեմատ ավելի քան 8 անգամ աճել է լուռ մերժումների թիվը՝ 3-ից դառնալով 24 (20%): Անպատասխան թողած հարցումների հեղինակներն են ՀՀ Մշակույթի նախարարությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը,

“ՀայՓոստ” ՓԲԸ-ն, “Համալսարանականներ” համատիրությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, Գյումրիի քաղաքապետարանը, եւ այլն:

Ի դեպ, այս մարմիններից մի քանիսը, ինչպես, օրինակ Գյումրիի քաղաքապետարանը եւ ՀՀ Պաշտպանության նախարարությունը թեեւ չէին պատասխանել քաղաքացիների հարցումներին, սակայն նույն հարցմանը պատասխանել էին, երբ այն ուղարկել էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից:

Երկրորդ եռամսյակում առկա է 7 հղում (6%), որոնց հեղինակները նշել են, որ իրենք չեն տեղեկատվություն տնօրինողը, կամ նշել են այն աղբյուրը., որից կարելի է ստանալ համապատասխան տեղեկատվությունը:

Ժամկետները

Ժամկետների առումով այս անգամ լավագույններից են Ստեփանավանի քաղաքապետարանը. պատասխանը ստացվել է մի քանի ժամվա ընթացքում՝ էլ. փոստով: Առողջապահության նախարարությունը (2 օր), Արտաշատի քաղաքապետարանը (3 օր), Արտակարգ իրավիճակների նախարարությունը (կրկնակի հարցմանը պատասխանել է 5-օրյա ժամկետում), էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունը (6 օր), բնապահպանության նախարարությունը (6 օր), ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը (6 օր), Աշոցքի գյուղապետարանը (6 օր):

Ժամկետների առումով վատագույնը ՀՀ պաշտպանություն նախարարությունն է. հարցման մերժումը ուղարկվել է 23 օր ուշացումով, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, որին ԻԱԿ-ի հարցմանը պատասխանելու համար անհրաժեշտ է եղել 1 ամիս և 16 օր ժամանակ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 26 օրում է պատասխանել: Հարցումներին պատասխանելու միջին ժամկետը տատանվում է 10-11 օր:

Հիմնական խնդիրները չեն փոխվել

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տեղեկատվության տրամադրման առումով դեռեւս կան չլուծված խնդիրներ: Դրանցից առաջնայինն այն է, որ ԻԱԿ-ի հարցումներին պատասխանում են, իսկ քաղաքացիների հարցումներին՝ ոչ: Օրինակ, 20011թ. 2-րդ եռամսյակի ընթացքում մի

շարք ուսանողներ հարցումներ են ուղարկել պետական տարբեր կառույցների, որոնք հիմնականում անպատասխան են մնացել: Այնինչ, նույն ուսանողի հարցումը կրկնակի հարցման տեսքով նույն կառույցին է ուղարկել ԻԱԿ-ը եւ ստացել պատասխան /իհարկե, ոչ բոլոր դեպքերում/:

Կան կառույցներ, որոնց աշխատակիցները պատասխանում են, որ ժամանակ չունեն պատասխանելու տեղեկատվություն ստանալու հարցումներին՝ նախընտրում են, ինչպես իրենք են ասում, "առավել պրակտիկ գործերով զբաղվել": Օրինակ, "Համալսարանականներ" համատիրության նախագահ Արմեն Թադեւոսյանը ԻԱԿ-ի հարցումն անպատասխան է թողել՝ հեռախոսով փոխանցելով, որ "շատ զբաղված է եւ հարցմանը պատասխանելու ժամանակ չունի":

Խնդիրներ են ի հայտ գալիս, երբ մարդիկ պետական մարմինների պաշտոնական էլեկտրոնային հասցեներով են ուղարկում հարցումները: Չնայած այս առումով մեկ այլ ուրախալի փաստ է նկատվում. Կան դեպքեր, երբ գրավոր հարցումներին պատասխանում են էլեկտրոնային: Օրինակ, **Ստեփանավանի եւ Հրազդանի քաղաքապետարանները հարցումներին պատասխանել են նույն օրը՝ էլ. փոստի միջոցով:**

Առկա խնդիրներից է այն, որ պետական մարմինները սովորություն են դարձրել հղում կատարել իրենց կայքերին՝ նշելով իրենց կայքերի հասցեին, եւ դիմումատուն պետք է երկար փնտրի եւ գտնի իր խնդրած տեղեկատվությունը: Օրինակ, ՀՀ բնապահպանության նախարարությունը /գրենական պիտույքների մասին/ հղում է կատարել e-gov.am եւ minfin.am կայքերին: